

19-րդ դարում գերմանական ազգը զարգացման ուղույն ճանապարհ է ընտրում: Նախ՝ կասկածի տակ են առնվում դասական քաղաքատնտեսության հիմնարար սկզբունքների «ամենուր» կենտրոնականության հնարավորությունները: Այդպիսի քաղաքագրված ազատական հայեցակարգին համապատասխան տնտեսական մոդելի կառուցումը երկրում չէր ստանում համապատասխան աջակցություն: Դիցուք նախորդ դարաշրջանում բազում անկախ իշխանությունների, դքսությունների, արքեպիսկոպոսությունների, քաղաք-պետությունների տարանջատված «խառնակույտը» բնորոշվում էր «Գերմանական ազգի սուրբ Յոհաննեսի կայսրություն»: Զաղաքականապես մասնատված երկրի բնակիչները կարոտաբարձորեն էին նայում հարեանների մոտ ձեռավորված ամուր պետականությանը: Ցավալիորեն արձանագրվում էր, որ այս կայսրությունում չէր գործում չափի ու կշռի, հարկային՝ եւ դրամական՝ միասնական համակարգը: Մինչեւ 19-րդ դարի երկրորդ կեսերը Գերմանիան չվերագտավ ծովային առեւտրի բնագավառում իր նախկին հզորությունը, եւ ընդհանուր առմամբ դիտվում էր որպես համաշխարհային առեւտրային ուղիներից մեկուսացված երկիր: Այս մտահոգությունները շարախվում էին զուտ արիական ռասսայի՝ գերմանացիների վերաբերյալ վերամբարձ պատկերացումներով:

Էվոլյուցիոն տվյալ առանձնահատկություններն անկասկած քննարկվում էին երկրում կազմակերպված տնտեսագիտական բանավեճերում եւ արտացոլվում տնտեսագիտության մեջ: Արդյունքում՝ Գերմանիայում ձեռավորվեց «պատմական» ուղղվածությամբ քաղաքատնտեսական նոր ուսմունք: Դասական քաղաքատնտեսությունը քննադատվում էր զուտ տնտեսական երեւույթները քննելու պատճառով, այսինքն՝ ըստ այդմ անտեսվում էին հասարակական կյանքի մյուս բնագավառները: Հերքվում էր «բնական օրենքների» անփոփոխության դրույթը: Եթե դասականների մոտ տնտեսական աճի ու զարգացման արդյունքում հնարավոր է արձանագրել առաջընթաց հասարակական կյանքի մյուս բնագավառներում, ապա Գերմանիայի պատմական դպրոցի ներկայացուցիչները հակառակն էին պնդում: Այսինքն՝ տնտեսական աճն ու զարգացումը կախված են մնացյալ բնագավառների զարգացման մակարդակից: Այսպիսով՝ պատմական դպրոցի կայացմամբ տնտեսական գիտության մեջ ուսումնասիրության օբյեկտի ընդլայնում էր նկատվում: Երկրի եւ ազգի ճակատագրի վերաբերյալ քննարկումներում տվյալ դպրոցի ներկայացուցիչների մոտ երբեմն նկատելի էր հայացքային տարբերություններ, թեպետ առկա նույնիսկ տրամագծային շեղումներին այս աշխատությունները հստակ միավորվում էին պատմական մեթոդի նշանակալի կիրառմամբ եւ դրա կիրառության գիտական հիմնավորմամբ:

Ձեռավորված իրողությունների այս ծիրում ծնունդ էր առնում

Գերմանիայի տնտեսության համար նախակիրառելի ուսմունքը: Այն ունեցավ հստակ տարանջատելի 3 փուլ: Առաջին փուլը թվագրվում է 19-րդ դարի 40-60-ականներ: Այս փուլը հայտնի է «Հին Պատմական դպրոց» անվամբ: Երկրորդ փուլը սկզբնավորվում է 19-րդ դարի 70-ական թվականներից եւ ավարտվում դարավերջին: Այս փուլն անվանվում է «Նոր Պատմական դպրոց»: Դարավարտին ստղմավորված «Նորագույն Պատմական դպրոցը» 20-րդ դարի առաջին քառորդում ավարտին է հասնում:

Պատմական դպրոցի ձեռավորման ու զարգացման առաջին փուլում հստակ ձեռակերպվում է քաղաքատնտեսության մեջ նոր ուղղության ի հայտ գալու գիտական անհրաժեշտության հիմնախնդիրը: Առաջադրվում էր այն միտքը, որ ազգերը զարգանում են՝ Էվոլյուցիոն իրենց բնորոշ սկզբունքներին, օրենքներին համապատասխան, ուստի՛ե յուրաքանչյուր երկրին հատուկ է ազգային տնտեսագիտությունը: Ազգը դիտվում էր ֆինանսականից գալու, «բարոյական» որոշակի կապիտալի կրող, եւ կարելի էր դրա պահպանման ու փոխանցման հիմքերի ապահովումը: Այս տրամաբանությամբ քաղաքատնտեսությունը բնորոշվում էր որպես ազգային գիտություն: Տնտեսագիտական հետազոտություններում չէին բացարձակացվում ազատական հայեցակարգի (Laissez faire) սկզբունքները: Շրջանառվում էր պրոֆեսոր Վ. Ռոշերի այն ասույթը, թե «Ժողովուրդների համար չի կարող լինել միասնական տնտեսական իդեալ, ճիշտ ինչպես բոլորի համար շրջագծեսող չի կարվում միեւնույն չափերով»: Կարելի էր ազգի ներսում արտադրողական ուժերի զարգացման հիմքերի բացահայտումը:

Այս տրամաբանության ծիրում, դիցուք՝ ըստ Լիստի, 12-13-րդ դարերում Իտալիան ուներ բոլոր հնարավորությունները ձեռավորել ազգային-տնտեսական բարեկեցիկ կառույց, սակայն ազգի ներսում բացակայում էր ազգային միասնության պատկերացումը: Տնտեսություն վարող սուբյեկտներն իրենց չէին ընկալում որպես մեկ համակարգի մասնիկ, նույնիսկ միմյանց հանդեպ թշնամաբար էին տրամադրված եւ վարում էին պատերազմական գործողություններ: Եզրակացվում էր, որ Իտալիայի Հանրապետության անկումը կարող էր պայմանավորված լինել ազգային միասնականության բացակայությամբ, արտաքին ուժերի ազդեցությամբ, այլ տնտեսական միավորների միջեւ խորացող մրցակցությամբ եւ այս ամենի դեմ ազգային դիմակայության հնարավորությունների ձեռավորման անկարողությամբ:

Այնուհայտ էր, որ ազգի միասնական լինելու հետեւանքով մեծ հաշվով ի վերջո տնտեսական զարգացումն անխուսափելի կլինի: Ահա սա էր դիտվում գերնպատակ, ուստի՛ե կարելի էր ազգային շահի գաղափարը: Անտեսվում էր անձնական շահի առավելագույն բավարարման այնպիսի հնարավորությունները, որի արդյունքում կասկածի տակ կարող էր դրվել ազգային ավանդույթ-

ՊԱՏՄԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐԱՔԱՏԵՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ. ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ ԵՎ ԶԱՐԳԱՋՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Մարգարիտա ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԵՊՅ
 տնտեսագիտության տեսության ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու



Արման ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԵՊՅ
 տնտեսագիտության տեսության ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու



ների պահպանման, ազգային շահի բավարարման հնարավորությունները: Ավստրալիայ էր, որ հարեան երկրների շահերի մեջ չէր մտնում ուժեղ հարեան ձեռավորելու թողտվության հնարավորությունը: Չէր անտեսվում համապատասխան ինստիտուցիոնալ միջավայրի ձեռավորման կարեւորությունը:

Այստեղ կարող է հետաքրքրական լինել այն, որ ուսումնասիրվում էր այլ երկրների տնտեսական զարգացման փորձը, որի հիման վրա փորձ էր կատարվում կառուցել սեփական տնտեսական զարգացման ռազմավարությունը, եւ կուրորեն չէր ընդունվում հարեան (զարգացած) երկրների առաջարկած տնտեսական «կազդուրման դեղատոմսերը», ինչը կարող է ցուցողական նշանակություն ունենալ, եթե ոչ ուսուցողական լինել մի շարք պետությունների համար նույնիսկ ներկայումս:

Թեեւ դիտարկվող ժամանակահատվածում դասական քաղաքատնտեսության անգլիացի, ֆրանսիացի մասնագետները հիմնականում քննադատաբար էին տրամադրված մերկանտիլիստական քաղաքատնտեսական համակարգի նկատմամբ, սակայն Գերմանիայում չէին խորշում իրապես վեր հանել մերկանտիլիզմի կառուցողական դերը ազատական հայեցակարգի ձեռավորման գործում: Սա էր պատճառը, որ Գերմանիայում սպորում էին մտքեր, թե ազատական հայեցակարգի կիրառությունն արդարացված է միայն հարեան երկրների հետ զարգացման միեւնույն բարձր մակարդակի հասնելու դեպքում:

Դիցուք 1857թ. Ռուսաստանը հրաժարվեց հովանավորությունից: Պատմությունը ցույց տվեց, որ տնտեսական զարգացման տեսանկյունից լավագույն լուծումը չէր: Ի համեմատություն այս ամենի՝ ամրագրվում էր, որ ԱՄՆ-ում տնտեսապես թույլ ճյուղերում կիրառվում էր հովանավորչական քաղաքականություն, իսկ տնտեսապես կայացած ճյուղերի համար ազատական պայմաններ էին ձեռավորվում: Որպես «զլորալ» շահագործման (առավել զարգացած երկրների կողմից թույլ զարգացած երկրների տնտեսական շահագործման) տեսության բացահայտող՝ Լիստը օբյեկտիվորեն համարվում է ազգային տնտեսական անվտանգության տեսության հիմնադիր: «Քաղաքատնտեսության ազգային համակարգ» (1841թ.) աշխատության մեջ նա փորձում է տալ այն հարցի պատասխանը, թե ինչպես կարող են պատմական զարգացման արդյունքում անհավասար տնտեսական հնարավորություններ ունեցող ազգերը իրավահավասար սկզբունքներով ինտեգրվել համաշխարհային տնտեսությանը: Իհարկե, այդ ժամանակաշրջանում չկար «համաշխարհային տնտեսություն» հասկացությունը, որպես այսպիսին, սակայն Լիստը ներկայացրեց այդ գաղափարի ուրույն տեսականը: Այս իմաստով նա համարվում է գլոբալացման (տնտեսության) մարզարե: Վերոնշյալ աշխատության մեջ առաջ քաշված հարցադրումները զարմանալիորեն առավել արդիական դարձան հրատարակումից մեկուկես դար հետո. «Որքան շատ զարգանա արդյունաբերությունը, այն այնքան հավասարաչափ կբաշխվի երկրագնդի վրա, եւ էլ ավելի շատ կնվազի պատերազմների հավանականությունը: Արդյունաբերական տեսակետից հավասարապես զարգացած երկու ազգեր մեկ շաբաթվա ընթացքում ի վիճակի են իրար ավելի շատ վնաս հասցնել, որի հետեւանքներն ի վիճակի են ուղղել մի ողջ սերունդ»:

Պատմության դասերը ցույց են տալիս, որ այդչափ ցանկալի

ազատության համար անհրաժեշտ է համապատասխան ինստիտուցիոնալ միջավայրի ձեռավորում եւ պատրաստվածություն: Հիմնախնդիրը նոր չէ հասարակական գիտության մեջ:

Գերմանիայի պատմական ուղղությամբ ստեղծագործող մասնագետների շրջանում քննվում էր տնտեսական քաղաքականության կարծաժամկետ եւ հեռազն ազդեցության հնարավորությունները: Հիմնախնդիրը զուտ տնտեսագիտական հարթությունում համապարփակ դիտարկում է Ա. Մարշալը:

Եզրահանգվում է, որ զարգացած երկրների համար ազատական տնտեսական քաղաքականության կիրառությունն արդարացված է, այնպես, ինչպես զարգացող երկրների համար նպատավոր է պետական հովանավորչական քաղաքականության իրականացումը:

Հիմնադրված այս նոր ուղղությունը հասարակական լայն շրջանակներում մեծ մասսայականություն է սկսում վայելել: Սակայն այս դպրոցի ներկայացուցիչները քաջ գիտակցում էին, որ միայն գիտական հարցադրմամբ հանդես գալը քիչ է: Անհրաժեշտ է նաեւ փաստարկմամբ, գիտական անաչառությամբ հարցադրման ճշմարտացիության եւ իրականությանը համապատասխանության լուրջ ապացույցներ: Այսպիսով՝ Նոր պատմական դպրոցի անաբեությունն այլ էր, եւ ներկայացուցիչների աշխատանքներն ամփոփում էին պատմական հսկայածավալ կյուբեր, որոնք ամռնվում էին տարբեր ժողովուրդների անցյալին, ինչպես նաեւ տվյալ ժամանակագրական փուլում ապրող ու գործող ժողովուրդների տնտեսավարման եւ կենցաղավարման առանձնահատկություններին:

Պրուսիայի հաղթանակով ավարտվեց 1870-1871թթ. ֆրանս-պրուսական պատերազմը: 1871թ. Օտտո Բիսմարկի գլխավորությամբ 300 մանր պետականություններ քաղաքականապես միավորվեցին՝ ձեռավորելով Գերմանական կայսրությունը: Ներդրվեց չափի ու կշռի, հարկման ու դրամական միասնական համակարգ: Գերմանիայում արտադրությունները կազմակերպվում էին պետական հովանավորությամբ, եւ դրանցում մեծապես կիրառվում էին նորագույն գիտատեխնիկական հայտնագործությունները: Տնտեսավարող սուբյեկտների հզորացումը նոր հնարավորություններ էր ընձեռում մրցակցային հարաբերությունների խորացման համար: Տնտեսական զարգացման նոր մակարդակում հայտնված Գերմանիան կարող էր մրցակցել եվրոպական մյուս երկրների հետ: Երկրում զարգանում էր ռեֆորմիզմը: Արդյունքում՝ Նոր Պատմական դպրոցի ներսում տեղի է ունենում գաղափարական փեղկում: Մի մասը՝ պահպանողականները, հանդես են գալիս տնտեսական համակարգի գործունեության ընթացքում վերջինի եւ ընդհանրապես տվյալ գաղափարախոսության անփոփոխ պահպանման դիրքերից: Այս ուղղությունը գլխավորում է պահպանողական Գ. Շմոլերը: Մյուս մասը՝ ազատական ուղղության ներկայացուցիչները, կողմնակից էին տնտեսական ազատականացմանը: Այս ուղղության գլխավորումը ստանձնում է ազատական Լ. Բրետանոն: Ըստ այդմ՝ ազգային տնտեսությունը դիտվում էր որպես մեկ միասնական համակարգ՝ բաղկացած տարամակարդակ ենթահամակարգերից: Շուկան դիտարկվում էր որպես մի ինստիտուտ, որը փոխառնվում է ոչ տնտեսական բազում գործոնների հետ: Այսպիսով՝ տնտեսական օրինաչափու-

Համիկ ՄԱՐԳԱՐՅԱՆ
ԵՊՀ
տնտեսագիտության
տեսության ամբիոնի
ասիստենտ



թյունների ի հայտ գալուն տրվում էր սոցիալական, հասարակական, քաղաքական և բազում այլ բացատրություններ:

Գերմանական հասարակության մեջ հատկապես նապոլեոնական արշավանքներից հետո նկատելի էր ուժեղ պետականություն ունենալու և ազգային արժեքների պահպանման գաղափարական վերածնունդ: Սրան համատեղ, երկրում սրվում էր սոցիալական լարվածությունը: Տնտեսագիտական միտքը պետք է ամփոփեր երկրում սոցիալական վիճակի բարելավման մտայնությունը, եւ երկրում տեղի ունեցող սոցիալական տարրորոշումների պայմաններում 1882թ. հրավիրվում է բավական ներկայացուցչական համաժողով: Հրավիրյալների թվում էին գիտության տարբեր բնագավառների ներկայացուցիչներ, հասարակական, քաղաքական կազմակերպությունների, արհեստակցական միությունների անդամներ: Ընդդիմախոսներն այս համաժողովում ներկա պրոֆեսորադասախոսական կազմին բնորոշեցին որպես «ամբիոնային սոցիալիստներ (կատեղեր-սոցիալիստներ)»: Հետագայում այս բնորոշումը տարածվեց տվյալ համաժողովի բոլոր մասնակիցների վրա, իսկ մասնագիտական գրականության մեջ երբեմն այս փուլի բոլոր ներկայացուցիչներին կոչում են «ամբիոնային սոցիալիստներ (կատեղեր-սոցիալիստներ)»:

Գաղափարական հետագա Էվոլյուցիայի ընթացքում Գերմանիայի պատմական դպրոցը թեւակոխեց զարգացման նոր (երրորդ) փուլ: Այն սկզբնավորվում է 19-րդ դարավերջին 20-րդ դարասկզբին և գիտական տեսքով ավարտվում է 20-րդ դարի առաջին քարորդում: Այս փուլի ականավոր ներկայացուցիչներն էին Վ. Չոմբարտը, Գ. Շուլց-Գեվերնիցը, Մ. Վեբերը:

Եթե պատմական դպրոցի զարգացման առաջին փուլում տնտեսական գիտության մեջ նոր հարցադրում էր ներկայացվում, երկրորդ փուլում վիճակագրական, պատմական տվյալներ էին հավաքագրվում և բազմապիսի համաժողովներ հրավիրվում, ապա երրորդ փուլում այս ամենի ամփոփմամբ տրվում էին համակողմանի պատասխաններ առաջ քաշված վարկածներին:

Տվյալ դպրոցն առաջացավ ի հակադրություն դասական քաղաքատնտեսության: Փոխառնելի դարձավ մարքայան տեսությամբ: Մեծ հաշվով չընդունելով նաեւ այն: Պատմական դպրոցի գիտական ավարտն ազդարարեց Մ. Վեբերը: Նա գիտական անկողմնակալությամբ ընդունեց ազատական հայեցակարգի գիտական ճշմարտացիությունը: Տնտեսագիտական միտքը որոշակիորեն վերադառնում էր այն մեկնակետին, որտեղ տեղի ունեցավ հայացքային փեղկում: Արդյունքում, սակայն, նկատվեց սկզբունքորեն նոր մակարդակի ձեռքբերում: Ընդլայնվեց տնտեսական գիտության ուսումնասիրության առարկան: Պատմական և ոչ տնտեսական գործոնների վրա համակ ուշադրություն բեւեռվեց, որն ավելի ամփոփված էր արիական ռասսայի վերաբերյալ վերամբարձ պատկերացումներով, ինչը կրում էր գիտական անկողմնակալության պահանջ: Ինչեւէ, դպրոցը վերադառնում էր այն սկզբունքներին, ինչը նախապես հերքվել էր:

Թեպետ տնտեսական զարգացումների այլ հարթությունում տնտեսագիտական միտքն անդրադարձ էր կատարելու այս գործոններին՝ առանց նմանօրինակ «անձնական և ռասսայական բնույթի նկատառումների» շեշտադրման և արդեն ոչ տնտեսական գործոնների միջեւ կոնկրետ նախընտրելիության հարցադրման ներկայացման: Խոսքը վերաբերում է ԱՄՆ-ում ինստիտուցիոնալ տնտեսագիտության առաջացմանը, ինչը կարելի է համարել տնտեսագիտական մտքի առավել մեծ թռիչք՝ իրականացված գիտության տարաբնույթ բնագավառների ինտեգրմամբ:

1. «Այդ շրջանում Դրեզդենից Սազդեբուրգ ապրանք տեղափոխելիս 16 անգամ մաքս էին վճարում», - մկնայն L.2., Դեռորյան L.Պ., Ուսումնական ձեռնարկ (տ.գ.դ., պրոֆ. L.2. մկնայնի խմբագրությամբ և ղեկավարությամբ), Երևան, Տնտեսագետ, 2005, 294 էջ, էջ 107
2. Հատվում է շրջանավորում էր շուրջ 600 տեսակի փող: Մանրամասն տես՝ նույն տեղում, էջ 106
3. Яггаров Я.С., История экономических учений, Учебник для вузов, Изд. 4-е, перераб. и доп., М.: ИНФРА-М, 2000, 480 с. (Серия – “Высшее образование”), с. 254; История экономических учений, Учеб. пособие, Под. ред В. Автономова, О. Ананьина, Н. Макашевой, М.: ИНФРА-М, 2006, 784 с. (Высшее образование), с. 140-158.
4. Գերմանիայի Պատմական դպրոցի ձեւավորման ակունքներում կանգնած տնտեսագետ, գաղափարախոս, հասարակագետ Ֆ. Լիստի տեսության ընդհանրացմամբ դուրս է բերվում, որ ազատական հայեցակարգի հիմնարար սկզբունքների կիրառությունը հավասարապես արդյունավետ չի կարող լինել զարգացման տարբեր մակարդակներում գտնվող երկրների համար: Չարգացման ցածր մակարդակ ունեցող երկրների համար կապիտալի, աշխատուժի և ապրանքների «անխոչընդոտ» փոխանակության հնարավոր դաշտի ձեւավորումը կարող է նույնիսկ կործանարար հետևանքներ ունենալ: www.jh.isea.ru – Журнал историко-экономических исследований, 2003, Т. 3, #2-3, П.П. Лузан, Фридрих Лист как историк экономики, Основная идея и база исследования.
5. Ընդհանրապես, ըստ մեզ՝ ազատ առևտրի ու հովանավորչության վերաբերյալ (տնտեսագիտական) բանավեճերը հարատևել են, քանի դեռ առկա է զարգացող ու զարգացած երկրների միջեւ շահերի բախում: Առևտրային հարաբերությունների ազատականացումը զարգացած երկրի համար տնտեսական զարգացման և առաջատար դիրքի պահպանման լավագույն պայմանը կարող է լինել, իսկ զարգացող երկրների համար այդ ուղուն հասնելու լավագույն ճանապարհը հովանավորչությունն է: Այս գաղափարների ճշմարտացիությունը ապացուցվեց գործնականում. շնորհիվ հովանավորչության՝ Գերմանիան թռիչք ապրեց XIX դ. վերջին և XX դ. սկզբին, Ռուսաստանը՝ 1893-1913թթ., իսկ Ճապոնիան իրականացրեց «տնտեսական հրաշքը»: Առաջանցիկ զարգացում ապրելով՝ մասնահատուկ այսօրվա Գերմանիան արդեն մեծապես ազատ առևտրի կողմակից է:
6. Ընդունվում էր, որ մերկանտիլիզմի քաղաքատնտեսական հասկացարգի կենսունակությամբ էր պայմանավորված տնտեսավարող սուբյեկտների կայացման, կենսունակության, զարգացման համար ջերմոցային պայմանների ձեւավորումը:
7. www.jh.isea.ru – Журнал историко-экономических исследований, 2003, Т. 3, #2-3, П.П. Лузан, Фридрих Лист как историк экономики, Основная идея и база исследования, Глава 8, Русские.
8. Նույն տեղում, Գլաва 9, Североамериканцы.
9. Ф. Лист, Национальная система политической экономики, М. 2005, с. 118.
10. Մասնավորապես այն հարթությունում գիտության տարաբնույթ բնագավառների փոխառնչմամբ քննվում էր ազատության ընկալման պատրաստակամության աստիճանը: Սա փոխառնելի էր դառնում իրագրության ու (տնտեսական) ռացիոնալության հիմնարկային: Հիմնահարցի անլուծելի խորացված տես՝ Иммануил Кант, Критика способности суждения, Санкт-Петербург: Наука, 2001; Ю.В. Перов, Содержание “Кант о способности суждения в контексте природы и свободы существа и должного”, с. 5-64, Первое Введение в критику способности суждения, 1789-1790, с. 65-112, Критика способности суждения, 1790, с. 113-394; Серж Московичи, Российская Академия Наук Институт Психологии, Франция, Дом Наук о Человеке; Век Толл, Исторический трактат по психологии масс, Москва, Центр Психологии и Психотерапии, 1996; Абрахам Гарольд Маслоу, Дальние пределы человеческой психики, Евразия, Санкт-Петербург 1999; Эрих Фром, Бегство от свободы, Минск: Харвест, 2003; Эрих Фром, Человек для себя, Минск, Харвест, 2003; Жан Бодрийар, В тени молчаливого большинства, Издание осуществлено в рамках программы “Пушкин” при поддержке Министерства иностранных дел Франции и Посольства Франции в России, Перевод с французского Н.В. Суслова, Издательство Уральского университета, 2000.
11. Альфред Маршалл, Основы экономической науки (предисл. Д.ж. М.: Кейнс, Пер. с англ. В.И. Бомкина, В.Т. Рысина, Р.И. Столпера), М.: ЭКСМО, 2007, 832 с. (Антология экономической мысли), Книга III О потребностях и их удовлетворении, Глава V, Выбор между различными видами потребления одной и той же вещи. Немедленное и отложенное потребление, с. 161-166, Книга V Общие отношения спроса, предложения и стоимости, глава V, Равновесие нормального спроса и предложения (продолжение) приминительно к долгим и коротким периодам, с. 369-383.
12. www.jh.isea.ru – Журнал историко-экономических исследований, 2003, Т. 3, #2-3, Е.В. Гильбо, Фридрих Лист, который опять современен, Фридрих Лист против Давида Рикардо и прусского юнкерства.